ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/3.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի մարտի 25-ին կայացած նիստի N2/3.2-3-25 արձանագրությամբ՝ «ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ընկերության պորտֆոլիոյի ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակի, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական նախահաշվում մի շարք կետերի տարբերության կամ դրանց բացվածքի, օրինակ՝ 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետերի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ ընկերության պորտֆոլիոյի ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակի, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական նախահաշվում մի շարք կետերի տարբերության կամ դրանց բացվածքի, օրինակ՝ 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետերի ներկայացման վերաբերյալ, մրցութային հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է ընկերության պորտֆոլիոյի էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակը, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական նախահաշվում 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետերի բացվածքը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Ներկայացված տեղեկատվությունը (էլեկտրոնային տարբերակով) ամբողջությամբ տրամադրվել է մրցութային հանձնաժողովին:

Կայացավ քննարկում և Հանձնաժողովի անդամները առաջարկեցին՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով, կազմակերպությունից պահանջել ֆինանսական նախահաշվում կատարել մի շարք փոփոխություններ՝ մասնավորապես.

- 2.1-2.3-րդ կետերը խմբավորել՝ նախատեսելով ընդամենը 1 գրաֆիկ դիզայների առկայություն,
- 2.16-րդ կետով սահմանված բացման արարողության համար ֆինանսավորում չնախատեսել կամ, հաշվի առնելով, որ բացման արարողության շրջանակում թմբուկահարների ելույթը դուրս է Հրավերի պահանջներից, նախահաշվում չներառել տվյալ տողը,
- 2.30-րդ կետում սահմանել՝ հաղորդավարական ծառայություն, քանակը՝ 1, եթե չափման միավորը նշվում է հատ, իսկ եթե չափման միավորը նշվում է անձ՝ սահմանել հաղորդավար, իսկ քանակը՝ 2 (կամ ավել),
- 2.31 կետում կազմակերպությունը պետք է հստակեցնի, որ տրանսպորտային ծառայությունները նախատեսված են նաև մարզերի համար,
- 2.7 կետը հստակեցնել:

Միաժամանակ հաշվի առնել, որ 2.25-ով սահմանված տաղավարի չափերը պետք է լինեն 4x5մ, 1 տաղավարը՝ 3x4 չափի, 1-ը՝ 10x10մ արկածային հատվածի համար, 1-ը՝ 5x5մ գաստրո հատվածի համար: Առաջարկել կազմակերպությանը պարզաբանել՝ 2.21 կետով սահմանված 90x90 չափի 4 սեղանները ո՞ր հատվածի համար են նախատեսված և ինչո՞ւ են առանց սփռոցի, ինչպես նաև հաշվի առնել, որ 2.34 կետում ներառված ֆլիպչարտի անհրաժեշտությունը չկա, իսկ նոթատետրերը և գրիչները, եթե տրամադրում է հյուրանոցը՝ ընդունելի է, իսկ եթե նախատեսվում է տպագրել ապա կարիք չկա, քանի որ ԶԿ-ն կտրամադրի իր բրենդինգով տարբերակները: Հստակեցնել նաև՝

- 2.4, 2.5, 2.45 և 2.49 կետերի ծառայությունն արդյո՞ք նույն մարդն է իրականացնելու, և եթե այո ապա ինչո՞ւ է առանձնացված ծախսային տողերով ներկայացվում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 1 (մեկ) կազմակերպությանը՝

- **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին՝**

ֆինանսական նախահաշվում կատարել մի շարք փոփոխություններ՝ մասնավորապես.

- խմբավորել 2.1-2.3-րդ կետերը՝ նախատեսելով ընդամենը 1 գրաֆիկ դիզայների առկայություն,
- 2.16-րդ կետով սահմանված բացման արարողության համար ֆինանսավորում չնախատեսել կամ, հաշվի առնելով, որ բացման արարողության շրջանակում թմբուկահարների ելույթը դուրս է Հրավերի պահանջներից, նախահաշվում չներառել տվյալ տողը,
- 2.30-րդ կետում սահմանել՝ հաղորդավարական ծառայություն, քանակը՝ 1, եթե չափման միավորը նշվում է հատ, իսկ եթե չափման միավորը նշվում է անձ՝ սահմանել հաղորդավար, իսկ քանակը՝ 2 (կամ ավել),

- 2.31 կետում կազմակերպությունը պետք է հստակեցնել, որ տրանսպորտային ծառայությունները նախատեսված են նաև մարզերի համար,
- 2.7 կետը հստակեցնել:

Միաժամանակ հաշվի առնել, որ 2.25-ով սահմանված տաղավարի չափերը պետք է լինեն 4x5մ, 1 տաղավարը՝ 3x4 չափի, 1-ը՝ 10x10մ արկածային հատվածի համար, 1-ը՝ 5x5մ գաստրո հատվածի համար:

Առաջարկել կազմակերպությանը պարզաբանել՝ 2.21 կետով սահմանված 90x90 չափի 4 սեղանները ո՞ր հատվածի համար են նախատեսված և ինչո՞ւ են առանց սփռոցի, ինչպես նաև հաշվի առնել, որ 2.34 կետում ներառված ֆլիպչարտի անհրաժեշտությունը չկա, իսկ նոթատետրերը և գրիչները, եթե տրամադրում է հյուրանոցը՝ ընդունելի է, իսկ եթե նախատեսվում է տպագրել ապա կարիք չկա, քանի որ ՀԿ-ն կտրամադրի իր բրենդինգով տարբերակները: Հստակեցնել նաև՝

- 2.4, 2.5, 2.45 և 2.49 կետերի ծառայությունն արդյո՞ք նույն մարդն է իրականացնելու, և եթե այո ապա ինչո՞ւ է առանձնացված ծախսային տողերով ներկայացվում:

2. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության՝

- **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի** հետ՝ մրցութային հանձնաժողովի առաջարկությունները ընդունելու և շտկված ֆինանսական հախահաշիվը 3-օրյա ժամկետում ներկայացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Հ.Սահակյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____